ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ / ՎԵՐԵԼԱԿՆԵՐԻ/ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/2-2

ք. Երևան «10» 10 2025թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արտավազդ Սարոյան» Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սարոյանի, որը գործում է Պետական Ռեգիստրի հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է՝ Վարչապետի աշխատակազմի կողմից իրականացվող **Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար, շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի /վերելակների/ վերանորոգման և պահպանման ծառայությունների**մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>**15**</u> աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 750000 (Յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.
Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված **գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով**: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված **ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:**

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված **գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:**

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am hասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, և N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից **տասնհինգ** աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.15 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են **Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ն՝** բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու	**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
Վարչապետի աշխատակազմ ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Բ/Հ ՀՎՀՀ 02505554 --- (ստորագրություն) Կ.Տ	«Արտավազդ Սարոյան» ԱՁ ք Աբովյան 3 մ շ 12 շ 53 բն **Բանկ**՝«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ, «Կոտայք» մ/ճ Հ/Հ 2479800152640000 ՀՀ՝43107739 Անհատ ձեռնարկատեր՝ Ա. Սարոյան --- /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
« 10 » 10 2025թ. կնքված
ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/2-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
2	50751100/503	Վերելակների վերանորոգման և պահպանման ծառայություններ, տեխնիկական բնութագիրը տես ՀԱՎԵԼՎԱԾ 1.1	դրամ	750 000	1	Ք.Երևան, Կոմիտաս 49/2	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 330 օրացուցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արտավազդ Սարոյան» ԱՁ

ք Աբովյան 3 մ 2 12 2 53 բն
Բանկ՝«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ, «Կոտայք»
մ/ճ
Հ/Հ 2479800152640000
ՀՀ՝43107739
Անհատ ձեռնարկատեր՝ Ա. Սարոյան

/ստորագրություն/
Կ.Տ

	Վերելակների վերանորոգման և պահպանման ծառայություններ
Չափաբաժին 2. Վերելակների վերանորոգման և պահպանման ծառայություններ	Գնման առարկա է հանդիսանում Երևան քաղաքի Կոմիտասի 49/2 վարչական շենքի «ՍԱՄԱՐԿԱՆԴ» տեսակի մարդատար վերելակի վերանորոգման և սպասարկման ծառայությունները: Սպասարկողը պետք է մատուցի վերելակի (500 կգ բեռնատարողությամբ, 1 մ/վ արագությամբ) տեխնիկական սպասարկման և շահագործման ծառայություններ, ինչպես նաև իրականացնի վերելակի ընթացիկ նորոգման աշխատանքներ: Կատարողը բոլոր տեսակի աշխատանքները կատարելուց պետք է առաջնորդվի «Վերելակների սարքավորումների անվտանգ շահագործման կանոններ»-ի պահանջներով, Պատվիրատուի ցանկությամբ և օժանդակությամբ վերելակները ներկայացնի հերթական կամ արտահերթ ստուգարքների Պետական տեխնիկական հսկողության մարմիններին, կանոնավոր կատարի վերելակների տեխնիկական զննման և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, անսարքությունների վերացման և վերանորոգման աշխատանքներն իրականացնի իր գործիքներով և համապատասխան սարքերով: Տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ժամանակ վերելակը պետք է պարբերաբար ենթարկվի 1.Դիտարկումների 2.Սարքավորումների և էլեկտրաապարատների ստուգումներ գործարկման ընթացքում, անհրաժեշտ պրոֆիլակտիկ աշխատանքների կատարումով: Վերելակի տեխնիկական սպասարկումը իր մեջ ներառում է հետևյալ աշխատանքների կատարումը 1.Տեխնիկական սպասարկում,որը կատարվում է 15 օրը մեկ անգամ (S.U.-1): 2.Տեխնիկական սպասարկում,որը կատարվում է ամիսը մեկ անգամ (S.U.-2): 3.Տեխնիկական սպասարկում,որը կատարվում է վեց ամիսը մեկ անգամ (S.U.-3): 4.Հնարավոր անսարքությունների (խափանումների) վերացում և վթարային իրավիճակների աշխատանքների վերացում: 1.S.U.-1 1.1 Վերելակի վերամբարձ կարապիկի դիտարկում: 1.2Արգելակների ստուգարք (զսպանակների ամբողջականություն,հոդակապերի միացում, լծակները, մեջդիրների մաշվածության աստիճան): 1.3 Էլ.սարքավորումների դիտարկում 1.4 Էլ. թողարկիչների և ռելեների կոնտակտորային համակարգի ստուգարք: 1.5 Կարապիկի և էլ. սարքավորումների ստուգում աշխատանքի ընթացքում: 1.6 Հորանային դռների աշխատեցման մեխանիկական համակարգի և նրանց փականների ստուգում: 1.7 Հորանային դռների համակարգի մեջ մտնող էլեկտրական վերջնական անջատիչների ստուգում: 1.8 Խցիկի դռների մեխանիկական և էլեկտրական համակարգի ստուգում: 1.9 Խցիկի և հորանի դռների աշխատանքի ստուգում միավորված ռեժիմում: 1.10 Տվիչների և դրոշակների ստուգում միավորված ռեժիմում,վերելակի ընթացքի ժամանակ: 1.11 Խցիկի դռների դիտարկում աշխատանքի ընթացքում: 1.12 Վերելակի հորանի էլ. լուսավորության ստուգում: 1.13 Մետաղական ճոպանների միացման համակարգի ստուգում: 1.14 Վերելակի աշխատանքի ստուգում հարկային կանչերի և խցիկի միջի կոճակներով: 1.15 Խցիկի աշխատանքի սահունության դիտարկում: 2.S.U.-2 2.1 Վերելակի դիտարկումը ,որը կատարվում է ամիսը մեկ անգամ համատեղվում է դիտարկումով, որը կատարվում է 15 օրը մեկ անգամ (S.U.-1): 2.2 Մեքենայական սրահի բոլոր էլ. սարքավորումների դիտարկում,շարժական սարքավորումների լարերի միացման ստուգում: 2.3 Հիմնական ճոպանատար անիվի առվակների մաշվածության ստուգում: 2.4 Արագության սահմանափակման գլխիկի անիվի ճոպանի առվակի մաշվածության ստուգում: 2.5 Բոլոր ճոպանների մաշվածության ստուգում:

2.6 Խցիկի և հակակշռի սահքի ներդիրների մաշվածության ստուգում:
2.7 Խցիկի և հակակշռի ուղղորդների ամրացվածության ստուգում:
2.8 Բոլոր հեղյուսային միացումների դիտարկում:
2.9 Բարձրացնող ճոպանները վթարային իրավիճակում գտնվելու ժամանակ անհրաժեշտ անվտանգության սարքավորումների աշխատանքի ստուգում:
2.10 Հորանում գտնվող էլ. Լարերի վիճակի ստուգարք:
2.11 Պողպատյա ճոպանների ամրացման կետերի համակարգի մեջ մտնող զսպանակների ամբողջականության ստուգում և բալանսի կարգավորում:
2.12 Խցիկի անկման որսիչների դիտարկում և մասնակի ստուգում:
2.13 Արագության սահմանափակման ճոպանի ձգման ստորահորանում գտնվող սարքի ստուգում:
2.14 Հորանի սարքավորումների վրա առաջացած աղբի հեռացում:
2.15 Խցիկի և հակակշռի ուղղորդների յուղման համակարգի դիտարկում:
2.16 Խցիկի առաջին և վերջին հարկերում գտնվելու խախտվածության վթարային անջատիչի ստուգում:

3.S.U.-3

3.1 Վերելակի դիտարկում ,որը կատարվում է վեց ամիսը մեկ անգամ համատեղվում է դիտարկումներով նախատեսված 1 և 2 մասերում:
3.2 Վերելակների սարքավորումների մեջ գտնվող բոլոր առանցքակալների դիտարկում:
3.3 Խցիկի անկման որսիչների աշխատանքի ստուգում:
3.4 Խցիկի գերբեռնվածության համակարգի աշխատանքի ստուգում:

Հ/Հ	Ապրանքի անվանումը	չափման միավորը	Միավորի արժեքը դրամ
1	Արագության սահմանափակիչի ճոպան 7.8մմ	Գծմ	1811
2	Հիմնական ճոպան 10.5մմ	Գծմ	2536
3	Տանող անիվ 770մմ	հատ	130410
4	Արագության սահմանափակիչ 1մ/վ	հատ	76073
5	Ձգող սարք	հատ	76073
6	Վերելակի խցիկի դռների փոկ	հատ	1449
7	Խցիկի դռների փոխանցման տուփ	հատ	57960
8	Վերելակի հորանի դռան էլ. շարժիչ	հատ	18113
9	Հորանում գտնվող հարկերի ճանաչման տվիչ	հատ	6521
10	Հորանի դռների գլորան	հատ	1449
11	Խցիկի ներդիր 16մմ	հատ	1449
12	Հակակշռի ներդիր 6մմ	հատ	1449
13	Խցիկի ներդիրի կիսալուսին ռետինե	հատ	580

	14	Խցիկի ներդիրի կիսալուսին այումինե	հատ	2174	
	15	Հորանի դռների բռնակ պտուտակ	հատ	2536	
	16	Հակակշռի զսպանակ	հատ	6521	
	17	Էլ. վահանակի գտնվող եռաֆազ ավտոմատ	հատ	8694	
	18	Էլ. ուժային կոնտակտոր	հատ	32603	
	19	Էլ. ուժային կոնտակտորի ուժային կոնտակտ	հատ	2536	
	20	Ռելե Ռ-ՊՈՒ-4	հատ	6521	
	21	Ժամանակի ռելե	հատ	2898	
	22	Տրանսֆորմատոր 380/110	հատ	21735	
	23	Էլ. պահարանում գտնվող եռաֆազ ավտոմատ	հատ	5072	
	24	Գլխավոր էլ.շարժիչի փաթույթների փաթաթում AH-200	հատ	253575	
	25	Գլխավոր էլ.անջատիչ	հատ	21735	
	26	Վերելակի հորանի կանչի ապարատ	հատ	5796	
	27	Վերելակի խցիկի հրամանի ապարատ	հատ	86940	
	28	Կախովի մալուխ 18*1	գծմ	2536	
	29	Արգելակման կոճ	հատ	25358	
	30	Կիսակցորդիչի մատիկի ռետինե վռան	հատ	1449	
	31	Արգելակման կոճղակներ	հատ	3623	
	32	Կիսակցորդիչի մատիկ	հատ	2174	
	33	Փոխանցման տուփի յուղ	լիտր	1449	
	34	Փոխանցման տուփի մանժետ	հատ	2898	
	35	էլ.շարժիչի առանձկակալ	հատ	4347	
		Նորոգման աշխատանքի անվանումը			
	1	Արագության սահմանափակիչի ճոպան 7.8մմ -ի փոխարինում	դրամ	942	
	2	Հիմնական ճոպան 10.5մմ /փոխարինում/	դրամ	1304	

	3	Տանող անիվ 770մմ-ի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	50715	
	4	Արագության սահմանափակիչ 1մ/վ -ի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	21735	
	5	Ձգող սարքի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	21735	
	6	Վերելակի խցիկի դռների փոկի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	362	
	7	Խցիկի դռների փոխանցման տուփի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	7245	
	8	Վերելակի հորանի դռան էլ. շարժիչի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	3623	
	9	Հորանում գտնվող հարկերի ճանաչման տվիչի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	725	
	10	Հորանի դռների գլորան կամ վերանորոգում	դրամ	362	
	11	Խցիկի ներդիր 16մմ-ի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	507	
	12	Հակակշռի ներդիր 6մմ-ի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	507	
	13	Խցիկի ներդիրի կիսալուսին ռետինե փոխարինում կամ վերանորոգում	դրամ	290	
	14	Խցիկի ներդիրի կիսալուսին ալյումինե փոխարինում կամ վերանորոգում	դրամ	725	
	15	Հորանի դռների բռնակ պտուտակի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	1087	
	16	Հակակշռի զսպանակի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	2174	
	17	Էլ. վահանակի գտնվող եռաֆազ ավտոմատի կամ վերանորոգում	դրամ	2174	
	18	Էլ. ուժային կոնտակտորի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	3623	
	19	Էլ. ուժային կոնտակտորի ուժային կոնտակտի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	1087	
	20	Ռելե Ռ-ՊՈԻ-4-ի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	1449	
	21	Ժամանակի ռելեի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	1087	

	22	Տրանսֆորմատոր 380/110-ի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	3623	
	23	Էլ. պահարանում գտնվող եռաֆազ ավտոմատի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	2174	
	24	Գլխավոր էլ.շարժիչի փաթույթների փաթաթում AH-200 փոխարինում կամ վերանորոգում	դրամ	14490	
	25	Գլխավոր էլ.անջատիչի փոխարինում	դրամ	7245	
	26	Վերելակի հորանի կանչի ապարատի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	2174	
	27	Վերելակի խցիկի հրամանի ապարատի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	18113	
	28	Կախովի մալուխ 18*1-ի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	725	
	29	Արգելակման կոճի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	3623	
	30	Կիսակցորդիչի մատիկի ռետինե վռանի փոխարինում	դրամ	725	
	31	Արգելակման կոճղակների փոխարինում	դրամ	2174	
	32	Կիսակցորդիչի մատիկի փոխարինում կամ վերանորոգում	դրամ	1449	
	33	Էլ.շարժիչի առանձկակալի փոխարինում	դրամ	2898	
	34	Փոխանցման տուփի յուղի փախարինում	լիտր	145	
	35	Փոխանցման տուփի մանժետի փոխարինում	դրամ	25358	
		Սարքավորումների և էլեկտրաապարատների ստուգումներ գործարկման ընթացքում, անհրաժեշտ պրոֆիլակտիկ աշխատանքների կատարումով			
	1	Վերելակի վերամբարձ կարապիկի դիտարկում	դրամ	1449	
	2	Արգելակների ստուգարք (զսպանակների ամբողջականություն,հոդակապերի միացում,լծակները,մեջդիրների մաշվածության աստիճան):	դրամ	362	
	3	Էլ.սարքավորումների դիտարկում	դրամ	3260	
	4	Էլ.թողարկիչների և ռելեների կոնտակտորային համակարգի ստուգարք:	դրամ	2174	

	5	Կարապիկի և էլ. սարքավորումների ստուգում աշխատանքի ընթացքում:	դրամ	1449	
	6	Հորանային դռների աշխատեցման մեխանիկական համակարգի և նրանց փականների ստուգում:	դրամ	1811	
	7	Հորանային դռների համակարգի մեջ մտնող էլեկտրական վերջնական անջատիչների ստուգում:	դրամ	1811	
	8	Խցիկի դռների մեխանիկական և էլեկտրական համակարգի ստուգում:	դրամ	1087	
	9	Խցիկի և հորանի դռների աշխատանքի ստուգում միավորված ռեժիմում:	դրամ	1087	
	10	Տվիչների և դրոշակների ստուգում միավորված ռեժիմում,վերելակի ընթացքի ժամանակ:	դրամ	1594	
	11	Խցիկի դռների դիտարկում աշխատանքի ընթացքում:	դրամ	1087	
	12	Վերելակի հորանի էլ. լուսավորության ստուգում:	դրամ	507	
	13	Մետաղական ճոպանների միացման համակարգի ստուգում:	դրամ	2174	
	14	Վերելակի աշխատանքի ստուգում հարկաին կանչերի և խցիկի միջի կոճակներով:	դրամ	1087	
	15	Խցիկի աշխատանքի սահունության դիտարկում:	դրամ	1449	
	16	Մեքենայական սրահի բոլոր էլ. սարքավորումների դիտարկում,շարժական սարքավորումների լարերի միացման ստուգում	դրամ	2174	
	17	Հիմնական ճոպանատար անիվի առվակների մաշվածության ստուգում:	դրամ	2753	
	18	Արագության սահմանափակման գլխիկի անիվի ճոպանի առվակի մաշվածության ստուգում:	դրամ	1449	
	19	Բոլոր ճոպանների մաշվածության ստուգում	դրամ	1232	
	20	Խցիկի և հակակշռի սահքի ներդիրների մաշվածության ստուգում:	դրամ	2898	

21	Խցիկի և հակակշռի ուղղորդների ամրացվածության ստուգում:	դրամ	2174
22	Բոլոր հեղուսային միացնումների դիտարկում:	դրամ	2174
23	Բարձրացնող ճոպանները վթարային իրավիճակում գտնվելու ժամանակ անհրաժեշտ անվտանգության սարքավորումների աշխատանքի ստուգում:	դրամ	1956
24	Պողպատյա ճոպանների ամրացման կետերի համակարգի մեջ մտնող զսպանակների ամբողջականության ստուգում և բալանսի կարգավորում:	դրամ	3478
25	Խցիկի անկման որսիչների դիտարկում և մասնակի ստուգում:	դրամ	2898
26	Արագության սահմանափակման ճոպանի ձգման ստորահորանում գտնվող սարքի ստուգում:	դրամ	3623
27	Հորանի սարքավորումների վրա առաջացած աղբի հեռացում:	դրամ	2536
28	Խցիկի և հակակշռի ուղղորդների յուղման համակարգի դիտարկում:	դրամ	507
29	Խցիկի առաջին և վերջին հարկերում գտնվելու խախտվածության վթարային անջատիչի ստուգում:	դրամ	1304
30	Վերելակների սարքավորումների մեջ գտնվող բոլոր առանցքակալների դիտարկում:	դրամ	2174
31	Խցիկի անկման որսիչների աշխատանքի ստուգում:	դրամ	3623
32	Խցիկի գերբեռնվածության համակարգի աշխատանքի ստուգում	դրամ	3260
		Ընդամենը	**1 150 000**

-Ծառայության միավոր գները հաշվարկված են սույն Պայմանագրի 4.3 կետով սահմանված բանաձևի համաձայն:

*Ծառայությունների մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

***Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և այսունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

Պարտադիր պահանջ՝

1. Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի կողմից պահանջը ներկայացվելու օրվանից՝ 3 օրացուցային օրվա ընթացքում, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

2. Վերելակների սպասարկումը և նորոգումը իրականացնել որակավորում ունեցող էլեկտրամեխանիկների միջոցով: Վերոնշյալ ծառայությունները պետք է մատուցվեն աշխատանքային օրերին 09:00-18:00 ընկած ժամանակահատվածում:
3. Վերելակների սպասարկման և նորոգման աշխատանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում առնվազն 365 օրացուցային օր:

ԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
Վարչապետի աշխատակազմ ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ ՀՎՀՀ 02505554	«Արտավազդ Սարոյան» ԱՁ ք Աբովյան 3 մ 2 12 2 53 բն **Բանկ`«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ, «Կոտայք» մ/ճ** Հ/Հ 2479800152640000 ՀՎՀՀ 43107739 Անհատ ձեռնարկատեր` Ա. Սարոյան
--------------------------------- /ստորագրություն/ Կ.Տ	--------------------------------- /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
« 10 » 10 2025թ. կնքված
ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/2-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	50751100/503	Վերելակների վերանորոգման և պահպանման ծառայություններ, ՀԱՎԵԼՎԱԾ 1.1	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ:*
*** Վճարումները կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վարչապետի աշխատակազմ	«Արտավազդ Սարոյան» ԱՁ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 1	ք Աբովյան 3 մ 2 12 2 53 բն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	**Բանկ**՝«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ, «Կոտայք» մ/ճ
Հ/Հ	Յ/Յ 2479800152640000
ՀՎՀՀ 02505554	ՅՅ՝43107739
	Անհատ ձեռնարկատեր Ա. Սարոյան
---------------------------------- /ստորագրություն	---------------------------------- /ստորագրություն/

Հավելված 3
« 10 » 10 2025թ. կնքված
ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/2-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
____
____
գտնվելու վայրը _______
հհ _______________
հվհհ _______________

Պատվիրատու
____
____
գտնվելու վայրը _______
հհ_______________
հվհհ_______________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
____
ստորագրություն
____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
____
ստորագրություն
____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 10 » 10 2025թ. կնքված
ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/2-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

Հանձնեց

____
ազգանուն, անուն

____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____
ազգանուն, անուն

____
Ստորագրություն

Հավելված N 4
« 10 » 10 2025թ. կնքված
ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/2-2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. __________________________-ի և ______________________-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

___________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

____
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.

Հավելված 5.1
«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/2» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «_____»____________________ 2025թ.

Արտավազդ Սարոյան Ա/Ձ ի դեմս Ընկերության տնօրեն Արտավազդ Սարոյան անձնագիր AR0385257, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1" Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է **«Վարչապետի աշխատակազմ»-ի** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/2»** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.5 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.6 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.7 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո)

2" Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Արտավազդ Սարոյան Ա/Ձ
ընկերության անվանումը

Հասցե ք.Աբովյան 3մ/շրջան 12շենք53բն
ընկերության հասցեն

Բանկը«Արդշինբանկ» ՓԲԸ՝ «Կոտայք» մ/ճ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

Հ/Հ 2479800152640000
ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 43107739
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Արտավազդ Սարոյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

ԿՏ

Օր/ամիս/տարի

Լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

1.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ ԱՁ Արտավազդ Սարոյան

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Բանկը«Արդշինբանկ» ՓԲԸ՝ «Կոտայք» մ/ճ

6. Վճարողի հաշվի համարը՝2479800152640000

7. Վճարողի ՀՎՀՀ՝43107739

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ **«Վարչապետի աշխատակազմ»**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02505554**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900005000758**

14.Գումարը (թվերով և բառերով)՝158730/հարյուր հիսունութ հազար յոթ հարյուր երեսուն/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարմանապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /____________________/ /____________________/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /____________________/ /____________________/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /____________________/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /____________________/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

* Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:

Հավելված 4.2
«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/2» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(որակավորման ապահովում)

ք. Երևան «______»____________________ 2025թ.

Արտավազդ Սարոյան Ա/Ձ ի դեմս Ընկերության տնօրեն Արտավազդ Սարոյան անձնագիր AR0385257 որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է **«Վարչապետի աշխատակազմ»-ի** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից

կազմակերպված՝ **«ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-26/2»** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման հանգամանքների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած վնասների (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Արտավազդ Սարոյան Ա/Ձ
Ընկերության անվանումը

Հասցե ք.Աբովյան 3մ/շրջան 12շենք53բն
Ընկերության հասցեն

Բանկը«Արդշինբանկ» ՓԲԸ՝ «Կոտայք» մ/ճ
Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

Հ/Հ 2479800152640000
Ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 43107739
Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Արտավազդ Սարոյան
Ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Օր/ամիս/տարի

Օր/ամիս/տարի

Լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը փեղեկագրում հրապարակելը:

1.	ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*
2. Թիվ	
3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.	
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ ԱՁ Արտավազդ Սարոյան	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Բանկը«Արդշինբանկ» ՓԲԸ՝ «Կոտայք» մ/ճ	
6. Վճարողի հաշվի համարը՝2479800152640000	
7. Վճարողի ՅՎՅՅ՝43107739	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝**Վարչապետի աշխատակազմ**	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02505554**	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900008000664**	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 238095/երկու հարյուր երեսունութ հազար իննսունհինգ/	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՅՅ դրամ AMD	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>	
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /____________/ /____________/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /____________/ /____________/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /____________/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /____________/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

* *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*